ՋԱՎԱՀԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» ՈՐՊԵՍ 17-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Սույն աշխատանքի նպատակն է փորձել մեկ անգամ ևս անդրադառնալ 17-րդ դարի հայ մատենագրության առավել հայտնի հեղինակներին ու նրանց գործերին, ինչը հատկապես կարևոր է պատմագրության զարգացումն ու դրա ուղղությունները մեկնաբանելու, ինչպես նաև դարաշրջանի համաշխարհային պատմագրության մեջ հայ պատմագրության կատարած դերի և ունեցած առանձնահատկությունների տեսանկյունից: Բացի այդ պատմության ամենատարբեր խեղաթյուրումներից խուսափելու ու դրանք քննադատելու լավագույն տարբերակը հենց սկզբնաղբյուրներին հավատարիմ մնալն է, այլ ոչ թե պատմությունը քաղաքականացնելն ու դրանից անհրաժեշտ դիվիդենտներ քաղելը: Այս մոտեցումն առավել հրատապ է դառնում հատկապես մեր օրերում:

Մեր կողմից ուսումնասիրման առարկա դարձած ժամանակաշրջանի առավել հայտնի հեղինակներից մեկն էլ հենց Առաքել Դավիրժեցին է ու նրա «Պատմությունը»:

Նշանավոր պատմագիր Ա. Դավրիժեցին ծնվել է մոտ 1590թ.՝ Ատրպատականի Թավրիզ քաղաքում /հենց ծննդավայրի անունով էլ կոչվել է Դավրիժեցի/, մահացել 1670-ին՝ Վաղարշապատում /թաղված է էջմիածնում. տապանաքարի վրա գրված է հետևյալը՝ «Պատմագիրն այս է տապան Առաքել վարդապետի ՌԵԺԹ»/[1]: Դավրիժեցին նաև նշանավոր եկեղեցական գործիչ էր, սովորել է Սբ. էջմիածնի հոգևոր վարժարանում՝ աշակերտելով Փիլիպպոս I Աղբակեցի կաթողիկոսին: Այնուհետև ձեռնադրվել է վարդապետ և զբաղվել ուսուցչությամբ: Սրբ. էջմիածնի միաբանության անդամ էր, նրա ճանաչված գործիչներից մեկը, իսկ 1636-1637 թթ.՝ Հովհաննավանքի վանահայրը[2]: Իբրև Սրբ. էջմիածնի պատվիրակ՝ նա ուղևորություններ է կատարել դեպի Պարսկաստան, Թուրքիա, Սիրիա, Պաղեստին, Հունաստան, եղել Արևմտյան Հայաստանի գավառներում և 1645-1646 թթ. Մայր Աթոռի համար կատարել հանգանակություն[3]: Այս ուղևորություններն էլ հենց մեր կարծիքով վճռական նշանակություն են ունեցել ապագա պատմագրի պատմական աշխարհայացքի ու աշխարհընկալման, պատմական իրադարձությունների բավականին խորն ու բազմակողմանի վերլուծության ունակությունների ձևավորման գործում:

Դավրիժեցու «Պատմությունը» հայտնի է նաև «Գիրք պատմութեանց», «Պատմագիրք» և այլ անուններով[4]: Այն գրվել է Փիլիպոս Ա Աղբակեցի

կաթողիկոսի հանձնարարությամբ՝ 1651-1662 թթ, որը կրում է «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ սակս դիպուածոյ Հայաստանեայց եւ գաւառին Արարատայ եւ մասին Գողթան գաւառի, սկսեալ ի ՌԾԱ թուականին հայոց մինչ ի ՌԵԺԱ թ.» խորագիրը: Փիլիպոսի մահից հետո Դավրիժեցին կիսատ է թողում աշխատությունը, սակայն նոր կաթողիկոսի՝ Հակոբ Զուղայեցու պահանջով շարունակում է ստանձնած գործը:

Չնայած Դավրիժեցին իր աշխատության վերնագրում հստակ նշել է իր աշխատանքի ժամանակագրական հատվածը, սակայն գրքում հանդիպում են նաև ավելի ուշ շրջանին վերաբերվող տեղեկություններ: Դեռևս հեղինակի կենդանության օրոք՝ 1669 թ. «Պատմություն» աշխատությունը հրատարակվել է Ամստերդամում մի բան, որը շատ հազվադեպ է պատահում քննարկվող ժամանակաշրջանի հայ հեղինակների համար: Այդ փաստը վկայում է նաև այն մասին, որ Դավրիժեցու «Պատմությունը» հոգեհարազատ էր ժողովրդին, ձեռք էր բերել լայն ճանաչում հայ հանրության շրջանում, ինչն էլ շահագրգռել է ժամանակի հայ հրատարակիչներին՝ առաջինը տպագրել նշված գործը:

Ամստերդամում 1669 թ. Ոսկան Երևանցու նախաձեռնությամբ լույս տեսնելուց հետո Դավրիժեցու «Պատմությունը» հետագայում ևս հրատարակվել է: Գրքի՝ «Պատմութիւն նեղութեանց և վշտաց, զոր կրեցին հայ ազգաւ քրիստոնեայքն, որ բնակեալք են ի քաղաքն Իլով» հատվածը հրատարակվել է նաև առանձին՝ 1884 թ.՝ «Բռնիմիութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ. ժամանակակից յիշատակարանք»[5]: Դավրիժեցու «Պատմությունը» 1874 թ. թարգմանվել է ֆրանսերեն, 1973-ին՝ ռուսերեն, 1981-ին՝ լեհերեն, 1974-ին՝ վրացերեն /հատվածաբար/: Այս փաստը վկայում է այն մասին, որ Առաքել Դավրիժեցու պատմությունը մեծ հետաքրքրություն է ներկայացրել ինչպես հարևան, այնպես էլ եվրոպական ժողովուրդների համար: Հայոց այս պատմագիրը ստեղծել է նաև կրոնական բովանդակությամբ տաղեր՝ «Տաղ վասն մահրամայի» և «Տաղ անուշ և գեղեցկազան», որը սակայն գերիշխող չէ Առաքել Դավրիժեցու ժառանգության մեջ:

Դավրիժեցու «Պատմությունը» արժեքավոր սկզբնաղբյուր է նաև հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրության համար: Պետք է ասել, որ հեղինակի նպատակը Արարատյան երկրի՝ 17-րդ դարի առաջին կեսի քաղաքական պատմության ներկայացումն էր: Այնուհանդերձ, նա հաճախ է դուրս եկել խնդրո առարկա հարցի աշխարհագրական ու ժամանակագրական սահմաններից: Դավրիժեցին կարևոր և նույնիսկ խիստ բացառիկ տեղեկություններ է հաղորդում Նոր Զուղայի և Լվովի հայ գաղութների, ինչպես նաև Օսմանյան կայսրության ներքին դրության, վրացիների, պարսիկների և այլ

ժողովուրդների մասին: Առանձնահատուկ ուշադրություն են գրավում «Պատմության» այն հատվածները, որոնցում անդրադարձ է կատարված Հայաստանի քաղաքական ու տնտեսական կացությանը, պարսկա-թուրքական պատերազմների պատմությանը, ջալալիների շարժմանը, Շահ Աբբասի՝ 1604 թ. կազմակերպած հայերի բռնագաղթին ու դրա հետևանքներին, Գեորգի Սահակածեի գլխավորությամբ վրացիների մղած ազատագրական պայքարին, Լվովի հայկական համայնքում ծայր առած դավանաբանական վեճերին, հակաունիթորական պայքարին և այլն:

Հարկ է նշել, որ թեպետ Դավրիժեցու հաղորդած տեղեկությունները զգալիորեն ստույգ են և հաստատվում են այլ՝ մասնավորապես պարսկական ու Լվովում պահվող հայագիտական փաստաթղթերով[6], սակայն խնդրո առարկա աշխատությունը լի է նաև կողմնակի նյութերով: Կառուցվածքի առումով պետք է ասել, որ Դավրիժեցու «Պատմության» մեջ շարադրանքը հաճախ է ընդհատվում ու կտրտվում, կան բազմաթիվ կրկնություններ: Սակայն այդ թերությունները չեն գցում աշխատության իրական ու պատմագիտական արժեքը: Ավելին, ինչպես ճիշտ նկատել է Լորետա Դանեղյանը՝ չնայած «17-րդ դարում հանդես եկան նաև այլ պատմիչներ ու ժամանակագիրներ, սակայն նրանց երկերը ոչ բովանդակությամբ և ոչ մանավանդ իրենց պատմագրական արժանիքներով չկարողացան հասնել Դավրիժեցու երկի մեծությանը: Դավրիժեցին եղավ հայ միջնադարյան հարուստ պատմագրության վերջին խոշոր երախտավորը»[7]: Ավելորդ չէ հիշել նաև Լեոյի գնահատականը՝ «Առաքելը հանդիսանում է առաջնակարգ գրական մի աստղ, որ չունի իր նմանը թե նախորդ դարում և թե իր ժամանակակիցների մեջ»[8]:

Դավրիժեցին ուշադրություն է դարձրել նաև հայ եկեղեցու պատմության խնդիրներին: Հեղինակը խիստ անհաշտ դիրքեր է գրավել այն հայ հոգևորականների հանդեպ, ովքեր փորձեր են կատարել արևմտահայությանը էջմիածնից կտրելու միջոցով ստեղծել առանձին՝ թուրքահայ կաթողիկոսություն:

Ամփոփելով ուզում ենք մեկ անգամ ևս նշել, Առաքել Դավրիժեցու «Պատմության»-ը խիստ արժեքավոր սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի, Պարսկաստանիի և Օսմյան Թուրքիայի պատմության ուսումնասիրման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Բաբայան Լ. Հ. Դրվագներ 14-18րդ դդ. պատմագրություն, նաև՝ Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Եր., 1946:
[2] Նույնտեղը:
[3] Նույնտեղը:
[4] «Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ», Վաղարշապատ, 1896:
[5] «Քրիստոնյա Հայաստան».հանրագիտարան.Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբ.Եր 2002:
АракелДаврижеци, Книгаисторий, переводсармянского, предисловиеикомментарии Л. А. Ханларян, М., 1973.
[7] Դանեղյան Լ., Առաքել Դավրիժեցու երկրորդ Սեֆյան Իրանի 17-րդ դարի պատմության սկզբնաղբյուր. Ե., 1978:
[8] Լեո. Հայոց պատմություն, հ. Գ, Եր., 1946:

The <History> of ArakelDavrizhetsi as an important source of history of Armenia and the Armenian Diaspora of the XVII century

In his article, the author has touched scientific heritage of one of the most famous Armenian bibliogrofov 17th century ArakelDavrizhetsi.Based on specific examples given of the work Dazhrizhetsi<History>> The author later in the article concludes that a comprehensive study of <History>> A. Davrizhetsi can help to interpret not only the history of Armenia, the 17th century, but some of the questions the history of education of the Armenian diaspora.